

Հ. ԱՐՄԵՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ՄԵԾ ՎԱՍՏԱԿԱՌՐԸ

ՄԱՀՈՒԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

1866ի Ծննդեան ճրագալոյցի երեկոյեան, յաւերտեան պայծառ լոյսին մէջ կը բանար իր աչքերը Հ. Արմեն Կոմիտաս Բագրատունի, Մխիթարեան Միաբանութեան և, անտարակոյս, համայն հայ ազգին մեծագոյն գէմքերէն մէկը, վերածընունդի վսեմ գիւցաղներդուն:

Այդ Դճամեայ վանականը, որու դրական կեանքին ամբողջ յիսնամեակը նրբերուած էր հայ մշակոյթին, լոյսի և գեղեցկութեան պաշտամունքով արբելու, աւելի գեղեցիկ օր չէր կրնար ընտրել՝ բաժնորէրու համար այս աշխարհէն. ճրագալոյց... Միլիոնի լուսերդին լուսերամ թարգմանիչը կ'երթար, ահա, երգելու իր յաւերտեան «Լոյս դուարթ»ը...

Դար մըն է անցեր այն օրէն. բայց Բագրատունին կ'ապրի տակաւին Ս. Ղազարի վանականներուն և աշակերտներուն մէջ. անոր դանկէն, որ կը պահուի Մխիթարեան թանգարանին մէջ, չոգեր կը ցոլան անվերջ, ու մեր հոգիները կը բոցավառեն անմար հրայրքով:

Եւ ահա տիտանը յարութիւն կ'առնէ յանկարծ, արեւելեան հին թաղաւորի մը չքեղ պերճանքով:

Հայաստան և Սփիւռք խիղախօրէն կը հնչեցնեն Հայկեան բանակի յաղթական չեփօրները, իրարու բանազնաց կը դըրկեն՝ մամուլի սիւնակները գունդազուռող, արժանաւայել չուքով յիշատակելու համար այս դարադարձը:

Մխիթարեան հեղինակները յաճախ ա-

ռիթ ունեցած են համադրելու կամ վերլուծելու Բագրատունիի հսկայ վաստակը, վեր հանելով անոր մէջ՝ անգուղական դրարարագէտը, հին ու նոր դասական դրականութիւններու ամենավարպետ թարգմանիչը, նախնեաց զործերու վաստակաւոր հրատարակիչը, բազմահմուտ լեզուագէտն ու նրբաճաշակ դրագէտը, որ գիտէր մինչեւ անգամ կեանքի կոչել հաստափոր «Ջարգացելոց»ին հրկիզուած թերթերը:

Բագրատունի, իր օրերուն, առինքնած ու խանդավառած էր հայ զանգուածները: Խրիմեան ինքզինք անոր հողեղաւակը կ'անուանէր. Պէշիկթաշեան, Հէքիմեան, Թերզեան անոր հոգիէն կայծեր կ'առնէին. Վարուժան իր վրձինը կը թաթխէր Բագրատունիի երանգապնակին մէջ:

Մեր օրերուն իսկ, հակառակ որ Բագրատունիի աստուածային դրարարով ևւարծուէզէն թռիչքով բարախուն զրքերը չեն կարգացուիր շատ շատերէն, ան կը մնայ իբր հայ լեզուի գերագոյն քրմապետ, որ իր վեհ ու տիտանեան նայուածքով՝ կը շարունակէ գիւթել ամէնքը:

Արարատի նման խրոխտ գազաթ մը՝ Բագրատունին, Սփիւռքի մէջ, արտասահմանի Հայաստանին մէջ: Անոր յաւերտեան ձիւներէն՝ մեր լեզուի մշտահոս ակերը կը լեցուին անընդհատ, մեր ոսկեղէն մշակոյթի արտերը կը հասունանան անձայրածիր:

Յարգա՞նք անոր անմահ յիշատակին:



Հ. ԱՐՄԵՆ ԿՈՄԻՏԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
(1790-1866)

Բագրատունիի կենսագրական տուեալներով չենք ուզեր ծանրաբեռնել այս նրբալիկան էջերը, ոչ ալ անոր մեծարժէք երկերու թուարկումով:

Նոր նուէր մը կ'ուզենք ձօնել անմահ Վարդապետին. համեստ դափնեպսակ մը՝ զոր ինք իսկ Վարդապետը պատրաստած է իր ձեռքով:

Հրատարակութեան կը յանձնենք այն «Յառաջարան»ը, զոր Բագրատունի պատրաստած էր իր տղադրած Աստուածատրատունիի համար, սակայն, մեզի անյայտ շունչին համար, սակայն, մեզի անյայտ պատճառներով, ցարդ անտիպ կը մնար,

Մխիթարեան գիւնին մէջ պահուրտած: Ծանօթ է թէ Բագրատունին, 1860ին, բազմամեայ պրպտումներէ ու ձեռագրական նրբապնին համեմատութիւններէ ետք, հրատարակած է Աստուածաշունչը: Հրապարակած է կատարած անիկա. կայ աշխատանք է կատարած անիկա. տալը ձեռագիրներու հետ համեմատած, յոյն բնագրին հետ բաղդատած է ամբողջ առաջին անգամ ըլլալով՝ ի լոյս ընծայած է ինչ ինչ մասեր, ինչպէս Սիրաքի գիրքը, օգտագործելով Ս. Ղազարի ձեռագրական ձոխ հաւաքածոն:

